ուտելիքն եւ բնակիչների պաշարը փճացնելով, որպէս զի ոչ ոք այլ եւս չփափագէ դառնալ կամ մնալ, հարկանելով, սպանանելով բերին անմեղ, անտէրունչ ժողովուրդը լցրին Այրարատի ընդարձակ դաշտը, սպասելով, որ Շահաբբաս հրամայէ վարել Պարսկաստան։ Դաշտի շուրջը զօրքով պատած էր, որ ոչ ոք չկարողանայ փախչել։ Պարսիկները չմոռացան եւ Էջմիածինը կողոպտել աւերել, եւ երկու կաթուղիկոսներին մի քանի եպիսկոպոսների հետ թագնուած գտնելով, նրանց եւս քշեցին, բերին խառնեցին ժողովրդեան բանակի հետ։

Սակայն այդ ընդհանուր սրածութեան եւ թշուառութեան ժամանակ Հայի նախնական քաջութիւնը տեղ տեղ փայլեց, մանաւանդ Հայ կնոջ հերոսութիւնն եւ քաջասրտութիւնը հրատարակուեց։ Բարոյականութիւնը, ամուսնական պատուի նախանձախնդրութիւնը, որով Հայ ընտանիքը միշտ փայլել է աշխարհի երեսին, այստեղ եւս ցոյց տուեց իր զօրութիւնն եւ ապացուցեց, թէ որքան Հայ ազգը ճնշուած, հարստահարուած, անկեալ վիճակի մէջ եւս լինի, դարձեալ նա ունի մեծ բարոյական ոյժ դիմադրելու դժբախտութիւններին, նա ունի այնպիսի հաղուագիւտ յատկութիւններ, որոնք քաղաքակրթութեան եւ զարգացման ընդունակ ազգերին են միայն սեպհական։ Հայ կինն իր պատիւն անարատ պահելու համար, չէ վարանում մի բոպէ սարի ահագին բարձրութեան գլխից իրան անդունդը ձգել, կտոր կտոր